ԴԷՊԻ ԱՆԻ

Անին է հեռուում...

Վերջալոյսի ոսկէփայլ մշուշի միջից աղօտ ուրուագծերով յեղյեղուում են ինչոր անորոշ ձևեր հարթութեան ու բլուրների վրայ և արևի մեռնող շողերի հետ ամենքը միասին կարծես հևում են հոգևարքի մունջ տագնապով։

Դարերի հոգևարքը...

Եւ դեռ չի մեռել նա, այդ վիրաւոր ու լալկան Անին, հին օրերից իմ անձկութեան ու երազների առարկան, որի սըգաւոր ոգին քայլ առ քայլ ուղեկցել է ինձ բոլոր իմ թափառումների ժամանակ օտար հորիզոնների տակ, փսփսացել է իմ ականջին իր հսկայ վիշտը. երբ աստանդական կեանքից յոգնած իմ ճակատը դնում էի օտար աւերակների ժամռապատ քարերի վրայ տիեզերական ցաւը երազելով։ Նրա գունատ դատկերը ինձ հետ սգում էր Պոմպէի աւերակների մէջ և հեռուից վշտոտ հայեացքով թարթում էր ինձ, երբ ես դանդաղում էի Ֆորումի հսկայ կամարների տակ։ Եւ ամեն տեղ իմ երևակայութիւնը վերստեղծում էր նրան խենթ քմահաճոյքով, փարում էր նրա վէրքերին աւերակների բաղեղի պէս, իսկ հոգիս միում ու ծունկ էր իջնում նրա առաջ պաշտամունքի լռութեամբ։

Բոլոր անցած փառքերի լուռ բեկորների մէջ ես միշտ Անին եմ տեսել, Անին երազել և սիրել։ Եւ նրա կարօտի թախիծը ինչպէս մի մորմոքացող վէրք, երկրէ երկիր մաս եմ ածել ինձ հետ։

Այժմ Անի՞ն է հեռուում... բոլոր միւս մտքերս լռում են ինչպէս խոնջած թռչուններ, որոնք երեկոյեան հանգչում են ոստերի վրայ. հոգիս անհամբեր ու խանդավառ՝ թափ է առնում վայրկեան առաջ ապրելու նրա մահաշունչ լռութիւնը,

---

*) Տես «Մուրճ» №, 2—3

նրա համը ցաւերը, որոնք գալարւում են աւեր կամարների տակ։

Անին է իմ առաջը, այդ պառաւ ու հիւանդ մայրը, որի չորացած կրծքի վրայ գնում եմ սգալու այնքան թանկագին կորուստները և անցնող մեծութիւնների սև վախճանը։

Մօտենում ենք։

Պարիսպների երկար կարաւանն է մեր առաջը, մի յոգնած կարաւան՝ որ կարծես հեռուից, շատ հեռուից եկել է հասել այստեղ, բայց վիրաւոր ու կողոպտուած ծունկ է չոքել հարթութեան վրայ այլևս երբէք չբարձրանալու համար։ Զգիտես ինչ կայ ներսում, այդ պարիսպների յետևում, ինչ են ծածկում նրանք իրանց ծռմռուած, չարչարուած թիկունքների տակ, կ'ուզէիր թէ առնել սլանալ և մի ակնթարթում դիտել այդ խորհրդաւոր շէնքերը, բայց առաջդ է Հովուի եկեղեցին, աւերակների սևաւոր կարապետը, որ հասկանում է քո հետաքրքրութիւնը և շտապում է քեզ ասել, թէ ինչ կայ այնտեղ, այն պարիսպներից այն կողմը։

Հովուի եկեղեցին աւերակ Անիի պատկերն է։

Մենակ, անտէր ու վիրաւոր։

Սարսափի և ժահերի մի անիծուած օրում, երբ ամեն ինչ պղծւում էր ու կործանւում, այդ խղճուկ եկեղեցին մոռացուած որբի պէս, կարծես փախել է քաղաքից դրսում փրկութիւն որոնելով և այստեղ հարթութեան վրայ ընկել է թշնամիների հարուածների տակ։ Կանգ ենք առնում նրա առաջը։ Ժողովրդական երևակայութիւնը, որ միշտ սիրում է ոսկեզօծել գունատ իրականութիւնը և անփայլ պատմութիւնը, այս եկեղեցու հիմնարկութեան հետ կապել է մի սիրուն աւանդութիւն։ Հաւատացնում են, թէ Բագրատունիների մայրաքաղաքն այնքան հարուստ է եղել, որ մինչև իսկ հովիւը կարողացել է մեն-մենակ իր ծախքով կառուցանել այս եկեղեցին իր կնոջ սիրուն՝ որին մի հանդիսաւոր օր Մայր եկեղեցում տեղ չեն տուել գոռոզ տիկինները։ «Հազար» եկեղեցուց յետոյ այսպէս է շինուել մի եկեղեցին։ Իրօք եկեղեցի չէ սա, այլ մի մատուռ, ճիշտ այնքան մեծ՝ որքան հարկաւոր է պերճ քաղաքի հովուին և իր հպարտ կնոջ աղօթելու համար։ Բազմանկիւնի ու գողտրիկ այս շէնքը այնքան թեթև ոճ ունի, որ անգամ իր այս անփառունակ վիճակում յիշեցնում է գեղանի մի կոյս, ճկուն, բարեձև իրանով, համաչափ ու նուրբ կազմուածքով։ Առանձին ժասերի ներդաշնակութիւնը ամբողջի հետ այն աստիճան կատարեալ է, որ մարդ ճաշակում է շէնքի ճարտարապետական

պօէզիան և սրտի կսկիծով դիտում գեղեցկութեան այս անդարձ աւերակը։

Եւ կանգնած է նա՝ այդ Հովուի եկեղեցին մի ամայի խոզանի մէջ, որպէս մի լքուած սգաւոր, որ իր բախտակից քոյրերի հետ իր մեծ վիշտը միասին լալու մխիթարութիւնն էլ չունի։ Անողորմ կերպով աւերուած է նա... աւերել են և՛ ճամբորդները, և՛ հովիւներն ու հօտաղները, և՛ չարամիտներն ու ժամանակը՝ իր հողմ ու փոթորիկներով. ով ինչպէս կարողացել է, ինչպէս կամեցել։ Նախկին փառաւոր շէնքից մնացել է միայն կմախքը, չանգռուած, կրծոտուած ու անարգուած։

Հովուի եկեղեցին մեզ երկար պահել չի կարողանում։ Պարիսպները մօտ են, բոլորովին մօտ, նրանք կանչում, թարթում են մեզ։ Աւերակ են, այդ երևում է նաև հեռուից, բայց և այնպէս մեզ թւում է, թէ նրանց յետևում շինութիւն ու բնակութիւն, կեանք ու շարժում կայ։ Ներդաշնակութեան հեռաւոր ու ծարաւ մարդկային հոգին հրաժարւում է հաւատալ, թէ այդ զոռոզ բուրգերը հսկայ քաղաքի դամբարանի յուշարձաններն են, որոնք կանգուն են միայն նրա համար, որ աշխարհն իմանայ, թէ այնտեղ անդարձ կերպով թաղուած է մի փառաւոր կեանք, մի ամբողջ ազգի մեծութիւն։

Եւ շտապում ենք...

Պարիսպների մայր դռնից բացւում է զարհուրելի իրականութիւնը... մահուան, ոչնչութեան մի մայլ հեռանկար, որի վրայ սաւառնում է սոսկումը անգամ օրը ցերեկով։ Քարեր ու քարեր կոյտ-կոյտ. անկարգ ու այլանդակ թմբեր, փոքրիկ բլուրներ, տեղ-տեղ կիսաւեր, կանգուն շէնքեր, որոնք ջարդուած բանակի վերջին ռազմիկների պէս կարծես գերադոյն պայքարն են մղում անդարձ անկումից առաջ։ Կառքը ներս է մտնում պարսպի լայն, խրոխտ կամարի տակից. մի սառն, մեռելային շունչ է փչում մարդու երեսին և սարսռեցնում մարմինը. աւերակների հեքն է այն, որ խուսափում է մեռած քաղաքի վրայից։ Ձիերը քայլում են դանդաղութեամբ և նրանց ոտների տակ գետինը դղրդում է խուլ կերպով. թաղուած կեանքն է այն, որ տնքում է ցաւով. ամեն անգամ, երբ մի նոր ոտք գալիս է նրան ճխլելու։

Անիումն ենք...

Սկսում են այն մերթ խենթ, մերթ մոլոր թափառումները, որոնք այնպէս յատուկ են աւերակներ այցելութիւններին։ Առաջնորդս է մեր սիրելի բանաստեղծ՝ Աւետիք Իսահակեան, Ախուրեանի, աւերակների և Արագածի երգիչը. նա որ վախլուկ եղնիկների յետևից թափառել է Շիրակի բոլոր

մոլար ճամբաներով, ժանկութիւնից լացել է Անիի ամէն մի աւերակի մէջ, ամէն մի քարի վրայ։ Այստեղ նա իր տանն է կարծես, իր ստացուածքում, ճանաչում է բոլոր խորշերը, պրպտել է բոլոր անկիւնները, գիտէ աւերակների մունջ լեզուն։

Դժուար էր աւելի լաւ առաջնորդ ունենալ Անիում։ Երբ տարիներ առաջ Ադրիատիկի ափերում Վենետիկի կոնդոլների վրայ, հինաւուրց պալատների աւերակների տակ մենք միասին երազում էինք հայրենի աւերակները, ես երևակայել չէի կարող, թէ միասին պիտի ուխտ երթանք այս յիշատակարաններին։ Սա մի երջանիկ զուգադիպութիւն է։

Վերջալոյսի յետին շողերը դեռ դողդում են Ալաճայի կատարների վրայ. մինչև գիշեր դեռ ժամանակ կայ, շտապում ենք դէպի միջնաբերդը։ Սրբատաշ քարերի շեղջակոյտի տակ ծածկուած մի բարձր բլուր է այն՝ ուր հին շէնքերից լոկ յիշողութիւններն են մնացել։ Երևում են միայն բազմաթիւ շինութիւնների հիմքեր, փշրուած, քանդակազարդ քարեր ցաք ու ցրիւ փռուած՝ ինչպէս մրրկի թափով և այդ բոլոր աւերածի վրայ դեռ կանգուն է հոյակապ պալատի մի անկիւնը, որ արթուն պահապանի պէս այս բարձրութիւնից նայում է առաջը փռուած աւեր քաղաքին։ Այստեղ կայ նաև մի փոքրիկ եկեղեցի, պատերի կէսը ներքևից սև և վերը՝ կարմիր քարերով շինուած մի սիրուն շէնք, որ սեղանի կողմի այլանդակ բացուածքով նայում է Ախուրեանին։ Ահա բոլորն՝ ինչ մնացել է Բագրատունեաց մայրաքաղաքի Ակրոպոլսից։ Ո՛չ պալատներ, ո՛չ դամբարաններ, ո՛չ զօրանոցներ, ո՛չ տաճարներ. այս բոլորի փոխարէն միայն քարեր, քարեր։ Ամբողջ դարերի քաղաքական կեանքը հայ արքաների և բիւզանդական կիւրապաղատների՝ ծածկուած է այս փլուածքների տակ և առ այժմ խուսափում է մեզանից, ինչպէս անցեալի մշուշի մէջ կորած մի հին աւանդութիւն։

Միջնաբերդը բնականից աննման դիրք ունի. մի կողմից Ախուրեանն է հոսում անդնդախոր ձորի մէջ, միւս կողմից նրան գրկում է Ծաղկաձորը, որի մէջ հեծեծում է մի փոքրիկ վտակ։ Ամբողջ քաղաքը իր շրջակայքով, որքան աչքը կարող և կտրել, բացւում է հայեացքի առաջ։ Ալեզարդ Մասիսը և պառաւ Արագածը նայում են այստեղ. Ալաճայի բարձունքները և Կողբայ սարերը եթերային համբոյր են ուղարկում այս աւերակներին։ Լայն, ակնապարար հորիզոն, տեսարանը վեհ է և տխուր։

Այստեղից երևում են նաև աջ ու ձախ ընկած ձորերի

կրծքին բազմաթիւ արհեստական երկյարկանի կամ եռայարկ քարայրներ շարան-շարան։ Ինչի՞ են ծառայել դրանք. արդեօք սրհեստանոցներ են, խանութներ, թէ բնակարաններ, ուր ապաստան է գտել բազմամարդ քաղաքի պրոլետարեան... Ո՞վ գիտէ, գտնէ մեր հնագէտներից և ոչ մէկը վճռական ձևով մինչև այժմ, այդ չասաց։ Շուկայ, արհեստանոց, թէ բնակութեան տեղ, այդ միևնոյն է, մի բան հաստատ է, որ այդ այրերը՝ մի օր, մի ամբողջ կախուած քաղաք են կազմել, ուր եռացել է աշխատաւորների կամ առևտրականների կեանքը։ Ձորը թնդացել է նրանց աղաղակներից և ուրախ քրքիջներից, քարեայ կամ այլ սանդուխները անշուշտ կախուած են են եղել այրերի շրթունքներից, և օձապտոյտ, սիրուն շաւիղները գալարուել են ժայռերի կրծքին դէպի վեր, դէպի վեր։ Դիւթական քաղաք, որ ապրել է օդեղէն բարձունքում, անդունդների վրայ, արծիւների բոյնի պէս։ Ժամանակը՝ դանդաղ ու յամառ աւերել է ամեն ինչ, սրբել է ձորերի կուրծքը, հեղեղները լուացել են ու լիզել ճանապարհները, այժմ մնացել են միայն քարայրների բերանները, այլանդակ ու անձև, որոնք կոյր աչքերի սև խոռոչների պէս նայում են աւեր քաղաքին ոչինչ չտեսնելու համար։

Խորաձոր Ախուրեանն ու Ծաղկաձորը բնական ամրութիւններ են քաղաքին, բայց այդքանը բաւական չի համարուել, այս կողմից էլ պարիսպներ են քաշուած հաստաբեստ ու կուռ։ Հիացմունքի և զարմանքի արժանի տեսարան են ներկայացնում այդ պարիսպները։ Գոյնզգոյն քարերով ճարտարօրէն կերտուած այդ ամրութիւնները, ժայռերի կատարները գրկած՝ խօլ պարով կախուում են իրարից, ձգտում են դէպի ձորը, վազում են անդունդների վրայից, գալարուում են Ախուրեանի ափերով, նայում են ալիքներին լռութեամբ և ապա կրկին բարձրանում վեր, վեր։ Տեղ-տեղ նրանք այնպէս են կախուել խորխորատների վրայ, որ կարծես մի խենթ քմահաճոյքով ուզում են գետը նետուել, կամ փսփսում են նրա ականջին աւերակների յաւիտենական եղերերգը։

Մինչաբերդի դէմ ու դէմ, մի այլ բլրի վրայ կանգնել է Աղջկաբերդը (Ղըզ-ղալա), զոռոզ ապաստանը գեղեցիկ արքայադստեր, որ, ինչպէս ասում է աւանդութիւնը, խոյս է տուել քաղաքի ժխորից ու աղմուկից և իր ճոխ ապարանքը քաշուել՝ այն ժայռոտ դժուարամատչելի բարձունքների վրայ միայնութեան հանգիստը վայելու համար։ Ո՞վ էր այն արքայադուստրը, ի՞նչեր են անցել դարձել այն խրոխտ դղեակում, մենաւոր ժայռը երբ է ամայի դարձել, ո՞ւմ ձեռքով, այդ բոլորը չգիտէ ժողովուրդը։

և նրա ինչ փոյթն է։ Ապրում է հէքիաթը, երևակայութեան այդ գոյնզգոյն թիթեռը, որ պաշտում է գեղեցկութիւնը և ոյժը, և չքնաղ կոյսը դրել է վիշապ—գետի պաշտպանութեան տակ։ Ախուրեանը մի լայն պատոյտով գրկել է քարաժայռն ու դղեակը, ինչպէս մի հսկայական վիշապ, որ օր ու գիշեր հսկում է այնտեղ ապրող գեղանի աղջկայ վրայ։ Հինաւուրց ապարանքն ու բերդը վաղուց են խորտակուել, մոխիր դարձել. եկեղեցու միայն կէսն է կանգուն երևում հեռուից, բայց հնազանդ գետը դեռ շարունակում է ծեծել քարաժայռի հիմքը, հինաւուրց վիշապը դեռ հսկում է։

Եւ լեգենդան ապրում է...

Վար ենք իջնում Միջնաբերդից և դանդաղ ու ժոլար քայլերով, դիմում ենք դէպի ձորափը, նստում ենք քարերի վրայ աւելի մօտիկից տեսնելու Ախուրեանն իր ձորում։ Մի լռութիւն է իջնում մեր վրայ, ոչ ոքի շրթունք չի շարժւում, անգամ թեթև բացականչութեան համար. ստեղծւում է հոգեկան այն կացութիւններից մէկը, երբ մարդ առանց խօսքի կարդում է ընկերոջ ներքին աշխարհը, երբ կեղծիքը դառնում է անկարելի և բոլորի յոյզերը բղխում են մի հատիկ աղբիւրից։ Զէ՞ որ մենք Ախուրեանի ափին ենք նստած.

«Ի գետս Բաբելացւոց անդ նստէաք և լայաք»։

Ես իմ բոլոր թափառումների ժամանակ ոչինչ չեմ յիշում, բնութեան և ոչ մի տեսարան, որի գեղեցկութիւնը այնքան անյոյս թախիծ ունենար, լացի, վշտի այն աստիճան հզօր հաճոյք յարուցանէր մարդու հոգում, որքան Ախուրեանի ձորը, Անիի մօտ՝ աշնանային պայծառ երեկոյին։ Բնութեան իւրաքանչիւր գեղեցկութիւն, որքան և կենսալից ու սրտապարար, որքան և անմասն լինի տխուր յուշերից, ինքն ըստ ինքեան միշտ անուշ, դուրեկան վշտի աղբիւր է։ Բայց Ախուրեանը իր ժայռոտ ձորի մէջ, աւերակների ոտքի տակ, երեկոյեան մշուշով սքողուած՝ ամբողջապէս ցաւ է ու արցունք։ Այդպէս է լինում մատաղ ու գեղեցիկ կոյսը սև դագաղի մէջ, մահուան դալկութիւնը դէմքին, որին նայում ես անթարթ ու յափշտակուած՝ մոռանալով, որ այս գունատ գեղեցկութիւնը վերջալոյսի վաղանցուկ փայլ է միայն և որը շուտով լուծուելու է անյայտի ծոցում։ Ուրիշ ինչ է յիշեցնում Ախուրեանը, դուցէ ստոր կին, ջահիլ ու գեղեցիկ, որ մին-մենակ լալիս է անապատի ամայութեան մէջ կորած մի շիրմի վրայ և նրա հեծկլտանքը լոկ քամիներն են լսում։

Ո՜հ այս վշտոտ Ախուրեանը...

Մշտականաչ ափերի մէջ, խորը, խորը, համարեա ան-

դունդերում, բարձրաբերձ ու խոժոռ ժայռերի տակ՝ հոսում է. նա հնազանդ ու յոգնած՝ անվերջ, ծանր պայքարից՝ հոսում է, գալարում է ցաւագինօրէն, այնպէս որ մարդ ապրում է նրա դաժան կեանքի ճիգը։ Եւ նրա ձայնը ոչ վիրաւոր գազանի մռնչիւն է, այլ մեղմ, թախծոտ վշվշոց, ինչպէս սոյլերը մոլորուած հովերի, ինչպէս սոսափիւնը լալկան ուռիների։ Նա հեծկլտում է այն սգաւորի պէս, որ կորուստի անդառնալիութեան առաջ հնազանդ է, չի ճչում, չի աղմկում, վայնասուն չի բարձրացնում, քանի որ գիտէ, թէ այդ բոլորն անօգուտ է։

Դժբախտութեան մէջ գոռոզ Ախուրեան։

Բարձրից նրա վրայ սաւառնում են գիշակերները և սիրտ չեն անում ափերին իջնել, ամպերն են սուրալով անցնում, խոյս տալով նրա ահագին վշտից, գիշերները աստղերն են թարթում և ոչ մէկը նրա յատակին չի հասնում։ Արցունքի պղտորութիւն ունի նա, չի ուզում, որ իր մէջ երևան աշխարհի իրերը, որ աստղերը ժպտան, կամ թռչունները զուարճանան իր փայլով։ Աւերակների և ժայռերի այլանդակ ստուերներով գոհ է, մնացածի համար անէծք ու արցունք միայն ունի։

Եւ այս ժայռերը... այն լեռների խենթ զաւակներն են սրանք. վիթխարի հոմանիների պէս կրքոտ ու ցասկոտ՝ իրար յետևից գրոհ են տուել դէպի գետը, դէտի այս սգաւոր գեղեկուհին։ Ահեղ ու անհեթեթ հսկաների մի խուժան... Նրանք իրար թիկունքից, գլխի վրայից աշխատում են նայել վար, դէպի անդնդախոր ձորը՝ այն տեղ պառկած գեղեցկուհու չքնաղ մերկութիւնը տեսնելու. և իւրաքանչիւրը դժգոհ իր ընկերից, որ իրանից առաջ է անցել, լաւ տեղը գրաւել, լուռ զայրոյթով նոթերը կիտել, յօնքերը կախել է։ Առաջին շարքերը, որոնք տէր են ձորին ու գեղեցկուհուն, իրանց անշարժութեամբ ու մռայլով սարսափելի են, պայքարող գետի անզօր ճիգերի համար քարացած ու թունոտ հեգնութիւն ունին։ Նրանք մի խօլ պարով շրջապատել են նրան, զուարճանում են, վայելում են նրա համբոյրը, զնում են հետն անվերջ, որպէս յաւիտենական բանտապահներ, որոնք ուխտել են երբէք չբաժնուել, երբէք մենակ չձգել գեղանի գերուհուն։

Ախուրեանն իր ձորում... Դա մի Նիոբէ է, որ ահագին վշտից քարանալու փոխարէն, դատապարտուած է անվերջ սգալու իր նետախոց զաւակները, մի Լաոկոօն է, որ օձերի կծիկների մէջ չի մեռնում, այլ գալարում է ու հևում յաւիտենական հոգեւարքով։

Ախուրեանն իր ձորում... Դա մի անյոյս վշտի սքանչելի

մարմնացումն է, անհուն ցաւի գեղարուեստական հրաշակերտ, որի վարպետը, ինքը բնութիւնն է։

Գնացէք տեսնելու Ախուրեանն իր ձորում։

Եւ երբ որ գնաք, անպատճառ բարձրացէք Աղջկաբերդի կատարը։ Մի նեղ ու վտանգաւոր արահետ է առաջնորդում այնտեղ. զգոյշ, որ չսայթաքէք. դէպի աջ, անդունդը ահաւոր է, տեղ-տեղ բռնեցէք ժայռերից, յենուեցէք քարերին, սողացէք թէկուզ, բայց բարձրացէք։ Այնտեղ՝ կատարին գեղեցիկ, քանդակուած քարերի մի դէզ է, աւերակ եկեղեցու և պարանքի բեկորներն են դրանք. կանգուն է մի եկեղեցու պատը։ Անցէք նրա յետևը, մի փոքրիկ տերրաս կայ, մշտականաչ ու հարթ, կանգնեցէք այնտեղ, բայց վար չնայէք, ներքևի անդունդը ահռելի է, գլուխ է պտտուում. շունչ է բռնուում։ Եւ այն անդունդի մէջ դարձեալ Ախուրեանն է, որ գալիս է, կորչում ոտքերիդ տակ։ Այստեղից բացուող տեսարանի վրայ բնութիւնը գործել է կանխամտածած կերպով, գեղեցկութիւնը խառնել է խորհրդաւոր սարսափին, և ով կամենում է ճաշակել մէկը, ստիպուած է նաև դողալ մի մութ ուժից, որ թագաւորում է այս անդունդների, այս ժայռերի վրայ։ Ապրելու զօրեղ բնազդը զարթնում է թափով, բռնում է ամբողջ էութիւնդ, և ակամայ յետ-յետ ես քաշւում անդունդի շուրթից, թիկունքդ դէմ տալիս պատին, պինդ քարին ծեփուելու, նրա հետ լուծուելու համար։

Եւ հեռուն... էհ գնացէք տեսնելու Ախուրեանն իր ձորում, բայց անպատճառ Աղջկաբերդի ահաւոր, հրաշալի բարձրունքից։

Երեկոյ է, արևը ծածկւում է հորիզոնի յետևում. լեռներից իջնում են այլանդակ ստուերներ. ինչպէս դրան մտած հրէշներ, սողում են դանդաղութեամբ, պրպտում են ձորերն ու կիրճերը, հասնում, փարում են մռայլ աւերակներին, որպէս սգի զգեստներ։ Գորշ ժառախուղը ժայռերի կատարներից պոկուելով՝ իջնում է դէպի ձորը, յեղյեղւում է ափերի մէջ և նրա մուգ քօղի տակից դեռը հոսում է, ինչպէս կապարի մութ զանգուած՝ անփայլ ու խիստ։ Մի խումբ կաքաւներ հապճեպ ու աղմկալի թռիչքով բարձրանում են ժայռերի վրայ, վայրկենապէս խռովում երեկոյեան խաղաղութիւնը. և ապա կարծես լուծւում են սև հողի հետ։

Գիշեր է, աւերակների մռայլ գիշեր, որ սև թևերով իջնում է ու թուխս նստում, այնքան դամբարանների վրայ կիսաւեր շէնքերի հազիւ նշմարելի ուրուագծերը դաժան ու հրէշաւոր՝ դողդողում են թանձր խաւարի մէջ և նրանց հետ մարդու հոգին է դալարւում ու ցաւում։ Վրայ է հասնում մի այն-

պիսի լուութիւն, որ մարդ ակամայ փսփսուկով է խօսում իր ընկերոջ հետ, ինչպէս մեռելատանը՝ դագաղի առաջ։ Եւ ընկերը դարձեալ բանաստեղծն է, որի հետ գիշերային սև խաւարի մէջ քայլում ենք դէպի պարիսպները։ Մեր շուրջը կարծես ողջ դագաղներ են այս շարան-շարան աւերակները, մէկը մէկից ահագին, զարհուրելի. դագաղներ մի կեանքի, որ անցել է անդարձ։ Բոլորի վրայ աստեղազարդ գիշերը թարթում է իր բիւրաւոր աչքերը անկարեկից ու անյոյզ։ Արտասուելի է մտածել, որ մի օր կեանքի, խնդութեան, փառքի վրայ փայլփլող աստղերը այժմ էլ ժպտում են գերեզմաններին ու աւերածին, նոյնքան անհոգ, նոյնքան անգիտակից, որքան դարեր առաջ։ Երկինքն ու երկիրը կապուած չեն իրար հետ ցաւի և ցնծութեան դիւթական շղթայով. մարդն է լցրել տիեզերքի անհունութիւնը սփոփիչ պատրանքներով։

Խեղճ մարդ...

Քայլում ենք առաջ. մեր մտքերը սև են, ինչպէս մեր գլուխների վրայ ծանրացած գիշերը։ Մենք էլ մեր պատրանքներն ունենք, որով տարուում ենք այս խաւարի մէջ։

Անին գիշեր ժամանակ... ո՞վ է թափառել գերեզմաններում և ականջ դրել լացող խաւարի հեծկլտանքներին։ Մէկը խօսում է, փսփսում, տնքում. մի մութ խոռոչում ճանկեր կան, որոնք քարն են չանգռում. մեռե՞լ է արդեօք, որ փորձում է դուրս սողալ դամբարանից։ Մի փլուածքի տակ մի ուրիշը մրմնջում է ցաւով ու տանջանքով, ո՞վ, ո՞ւմն է խեղդում, ո՞վքեր են կրծոտում իրար խաւարի մէջ։ Ահա մի ոտնաձայն, էլի մէկը, էլի մէկը, քայլում են շտապ-շտապ, փախչում են զանազան կողմեր, կանգ առան. ակամայ են դնում արդեօք, մեզանից փախան... նայում ես շուրջդ, դէպի յետ, հեռուն, և... ոչի՞նչ, ոչի՞նչ. այդ բոլորը քամին է, աւերակների խենթ քամին և խաւարից շփոթուած երևակայութիւնդ։

Պարիսպների մօտ ենք։ Գիշերով սրանք էլ զարհուրելի են։ Թևատարած ու վիրաւոր հսկաներ, որոնք անիծում են և կատաղաբար բռունցք ցոյց տալիս երկնքին նրա անգթութեան, անկարեկից հայեացքի համար։ Բացուածքներ ունին նրանք, որոնց միջից մի հատիկ աստղ կաթեցնում է իր գունատ շողերը, առանց փայլ տալու մռայլ պատկերին։ Քամին հեծեծում է նրանց խոցերի մէջ և մութ տեղերում կարծես վիրաւոր գազաններ են կաղկանձում։

Ո՜հ այս քամին. ո՞ր տեղից է փչում նա միշտ մեղմ, միշտ լալկան. չոր խոտերն և թփերը խշխշում են, քարերը տնքում են, կամարները հևում, և ամենքը միասին լալիս են, լալիս։

Իմ ձեռնափայտը զարկւում է գետնին, հողն էլ արձագանգ է տալիս, որ խառնւում է քամու հետ։ Խաւարը թանձր է, ոչինչ չի երևում հեռուից, քայլում ես և յանկարծ առաջդ է ցցւում մի ահագին շէնքի մութ զանգուածը, յետոյ էլի մի ուրիշը․ ու թւում է թէ նրանք անթիւ են, երկրի արգանդից են դուրս վիժում, ուր թաղուած էին դարերից ի վեր, բարձրանում են իրար յետևից և նոյնպէս դողդողում են, ուժգին հեծկլտանքից ցնցւում իրանց ամբողջ կազմով և միանում քամու մշտական ողբ ու կոծին։

Աննկատելի կերպով պտոյտ ենք գործում, քայլում դէպի հարաւ։ Վերստին մեր առաջն է Ախուրեանը։ Նրա վրայ խաւարն ասես աւելի թանձր է, աւելի սև, ու սողում է գաղտագողի կերպով, հրէշի պէս, սողում է անձայն, իսկ նրա տակ ալիքներն են հեծեծում։ Այժմ նրանց ձայնն աւելի ուժգին է և աւելի յուզիչ։ Շրջակայքում ամեն ինչ կարծես այդ վշվշացող գետին է ականջ դնում և նա պատմում է, պատմում։ Ի՞նչ ես հեկեկում լալկան ու հիւանդ երեխայի պէս, որբացած գետ, ինչեր ես տեսել հին օրերում, արդեօք ինչու ես այդպէս գիշեր ցերեկ մռմռում քամում։

Հեռու, հեռու շներ են հաչում, խաւարը դողդողում է, գետը վշվշում, և լեռները նիրհում անդորր ու լուռ։ Մի թըռչուն ճչաց ձորի մէջ ու լռեց։ Քամին սաստկացաւ և իր հետ բերեց հազար ու մի ձայներ։ Շների ոռնոցը, չգիտես ինչու, աւելի բարձր, աւելի կատաղի դարձաւ։ Քամուց են արդեօք դժգոհ նրանք․ թէ՞ գետի շառաչից, կամ գուցէ լուռ աւերակների վրայ են հաչում, որոնք կանգնած են, սարսափելի են և չեն խօսում։

Կրկին լռութիւն, գետն է վշվշում միակերպ, անվերջ, և նրա ձայնը, որպէս անդուլ օրօր՝ քաղցրացնում է աւերակների քունը։ «Բարի՜ գիշեր, հանգի՜ստ քուն» մրմնջում են մեր շըրթունքները։

Եւ գետը բողոքում է, գետը վշվշում է… չէ՞ որ դարեր է, ինչ նրա համար չկայ ո՛չ «բարի գիշեր» և ո՛չ «հանգիստ քուն»։

Աւ․ Ահարոնեան